

ԱՐԱՁԻ

ՄԻՇԻԿԸ



891.995
Ա-82

ՊԵՏՐՈՍ

891.99Լ

ԱՐԱՁԻ

ՄՈՍԿՎԱ

Ա-82

պ.

Մ Ի Շ Ի Կ Ը

Նկարներ
Ս. ԱՅՎԱԶԹԱՆԻ



22

30

ԱՅ

Հ Խ Ս Հ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳՈՍՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
Բ Ա Ճ Ի Ն

ՅԵՐԵՎԱՆ

1938

12.02.2013



25
38

Հանգստյան որ եր: Յերեխաները հավաքվել եյին կոլտնտեսության բակում ու շրջապատել մի մեծ արջի: Իսկ արջը՝ Միշիկը զվարճացնում եր նրանց իր խաղերով: Քեռի Վարդանը՝ կոլտնտեսության պահակը, չիբուխը բերնին ժպտալով նայում եր Միշիկին:

—Միշիկ, ապա ներկայացրու պահակին,—ասաց քեռի Վարդանը, տալով նրան իր փայտը:

Արջը կանգնեց յերկու վոտների վրա, ապա թաթերով բռնելով փայտը, հրացանի նման դրեց ուսին ու սկսեց քայլել բակում: Յերեխաները ծիծաղով, շփոցով հետևում եյին Միշիկին:

Հետո Միշիկը ներկայացրեց ծե-
րունուն՝ ձեռնափայտով քայլելիս, ա-
պա հեծավ փայտի վրա, իբր թե ձիու
վրա եր նստել: Այդպես նա շատ խա-
ղաց ու վերջը հոգնելով՝ յեկավ նըս-
տեց քեռի Վարդանի մոտ:

Յես ուզեցի շոյել արջին, բայց
նա խեթ նայեց ինձ իր դեղին աչքե-
րով ու բարկացած մռմռաց:

— Ես Միշիկը շատ զարմանալի
գազան ե, — ասաց քեռի Վարդանը. —
նա մեր բոլոր կոլտնտեսականների
սիրելին ե. յես նրան բերել եմ ան-
տառից փոքր ժամանակ, հիմա տես-
նում ես շատ ե մեծացել. սա մեր լավ
պահակներից մեկն ե ...

— Ի՞նչպես — զարմացա յես:

— Ա՛յ, պատմեմ մի դեպք — դու
ինքդ կասես, թե ինչ մեծ գործ ե
կատարել մեր Միշիկը:



Մի գիշեր յես պահակ եյի մեր
կոլտնտեսուլթյան կալում՝ ցորենի
դեզերի մոտ: Հետս տարել եյի և մեր
Միշիկին: Եղ որերին մենք գիշերներն
ել սայլերով կրում եյինք ցորենը,
վորպեսզի գործը շուտ վերջացնեյինք:

Արդեն գիշերվա մեծ մասն ան-
ցել եր, մեկ ել տեսնեմ՝ յեկավ մեր
կոլտնտեսական Գրիգորը:

— Եստեղ, մոտիկ, մեր սայլի ակը
կտարվել ե, — ասաց նա — մի արի ոգ-
նիր:

— Ի՞նչպես դեզերի հսկելը թողնեմ
գամ, — ասի:

— Դե վոր ուրիշ մարդ չկա, ի՞նչ
անեմ, մի կես ժամով արի:

Ճարս կտրած գնացի, թողնելով
Միշիկին: Նա ծղոտի մեջ թաղված քը-
նել եր:

Մոտ մի ժամ չարչարվելով կար-
գի բերինք ամեն ինչ ու յես վերա-

դարձա մեր կալը: Իմ յետևից դանդաղ
գալիս եր սայլը:

Մոտենում եմ մեր դեզերին, տես-
նեմ՝ սովերի նման մի մարդ ե շարժ-
վում ու ինչ վոր խուլ ձայն ե գալիս:

Յես սկսեցի կասկածել՝ չլինի՞ թե
թշնամի յե յեկել... Մեր գյուղերում
կուլակներն ամեն կերպ աշխատում
եյին վնասել կոլտնտեսուլթյանը —
վառում եյին դեզերը, գողանում
կովերը, յեզները:

— Ո՞վ ես, — հարցրի յես բարձր
ձայնով:

— Յես եմ, Պետրոսը, — ասաց
խեղճացած ձայնով մի մարդ, — շուտ
արա, ազատիր ինձ:

Յես մոտ գնացի և ի՞նչ տեսա. —
ես մեր Միշիկը պինդ բռնել եր մեր
գյուղացի Պետրոսին ու բաց չեր
թողնում:

Պետրոսը մեր գյուղի կուլակի տղան էր, մեր կոլանտեսուլթյան կատաղի թշնամին:


— Եստեղ ի՞նչ ես շինում, — բղավեցի յես:

— Ճամբովը գնում եյի, — ասաց Պետրոսը, — մեկ ել տեսնեմ՝ ես արջը վրա ընկավ ու բռնեց, քաշեց ինձ ես կողմը:

— Մո՛ւտ ես ասում, — դու ուրիշ նպատակով ես յեկել. յես լավ գիտեմ, — դու ուզում ես մեզ վրասել. քեզ բաց չեմ թողնի, մինչև քննուլթյուն չկատարվի:

Նետո յես մոտեցա Միշիկին, շոյեցի գլուխը, հեռացրի նրա թաթերն ու ազատեցի Պետրոսին:

— Դե եստեղ նստի՛ր ու չջարժվես տեղիցդ, — հրամայեցի յես Պետրոսին:



Յես ու Միշիկը հսկում էինք
միասին, վորպեսզի չփախչի:

Շուտով յեկավ Գրիգորը՝ սայլի
հետ. յես պատմեցի նրան պատահած
դեպքի մասին: Նա արձակեց յեզներին
ու գնաց իմաց անելու մեր նախա-
գահին և միլիցիայետին:


Արդեն լուսացել էր, յերբ յեկավ
միլիցիայետը մեր կոլտնտեսուլթյան
նախագահի հետ: Նրանք դիտեցին
դեզի շորս կողմը ու մի տեղ նկատե-
ցին մի տուփ լուցկի:

— Ես լուցկու տուփը դ՞մւ յես
ձէել, — հարցրեց միլիցիայետը Պետ-
րոսին:

Պետրոսը լուռ էր:

— Դու յեկել էիր դեզերը վառե-
լու, — նորից հարցրեց նա:

Պետրոսը խոստովանվեց, վոր



յեկել էր դեզերը վառելու համար:

Միլիցիայետը տարավ Պետրոսին քննիչի մոտ՝ նրան դատի տալու յեվ պատժելու համար:

Շուտով յեկան, հավաքվեցին մեր կոլտնտեսական ընկերները և իմանալով Միշիկի արածը՝ մնացին զարմացած: Ե՛նպես էլին գովում նրան... Միշիկը դարձավ մեր ամենքի սիրելին:

— Ճիշտ եմ ասում, Միշիկ— հարցրեց քեռի վարդանը, շոյելով նրա գլուխը:

Միշիկը ուրախ կլանչեց, կարծես ասում եր՝

— Ճիշտ ե, ճիշտ ե...



4074

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

Chicago, Illinois, U.S.A. 60607
1950

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

« Ազգային գրադարան



NL0392822

ԳԻՆԸ 60 Կ.

563

7157

ԱՐԱՅԻ
ՄԻՏԿԱ
ԳԻՅ.ԱՐՄ.Ս.Ս.Ր. ԵՐԵՎԱՆ